# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂՈՐԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՁԵՌՆԱՐԿ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ, ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
UNDP
UNFPA
unicef յուրաքանչյուր երեխայի համար
OSCE Organization for Security and Co-operation in Europe

*Հեղինակ՝ Դավիթ Թումասյան,*
*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

*Ձեռնարկի մշակմանն աջակցել է Տաթևիկ Մանուկյանը:*

*Ձեռնարկը պատրաստվել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի կողմից:*

*Այս ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

*Սույն ձեռնարկում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:*

# ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ընտանիքում բռնությունը երեխաների վրա թե՛ ուղղակիորեն, թե՛ անուղղակիորեն բացասական բազմաթիվ հետևանքներ առաջացնող լրջագույն հիմնախնդիրներից է և երեխայի իրավունքների կոպիտ խախտում: Բռնությունն առհասարակ, իսկ ընտանիքում բռնությունը մասնավորապես, ծայրահեղ բացասական ազդեցություն է ունենում բռնության ենթարկված երեխայի ֆիզիկական և հոգեբանական, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական զարգացման և առողջության վրա:

Ընտանիքում բռնության դեպքերում կարևոր է արագ և արդյունավետ արձագանքը: Ընտանիքում բռնություններին արձագանքի նպատակն է իրականացնել երեխայի իրավունքների անհապաղ պաշտպանություն, ինչպես նաև հնարավոր վտանգների կանխարգելում: Հաճախ ընտանիքում բռնության ենթարկված երեխայի իրավունքների պաշտպանությունն ուղղակիորեն հանգեցնում է նաև ընտանիքում բռնության ենթարկված ընտանիքի այլ անդամների պաշտպանությանը, քանի որ գործնականում ընտանիքում բռնությունը ներառում է տարբեր անդամներին, բռնության տարբեր ձևեր, տարբեր հաճախականություն:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց բացահայտման, նույնականացման, որակյալ ծառայությունների տրամադրման կամ համապատասխան ծառայություններ ուղղորդելու հարցում առանցքային դերակատարություն ունեն ուսումնական հաստատությունների մանկավարժների և հոգեբանների ներգրավվածությունն ու զգոնությունը:

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել ուսումնական հաստատությունների մանկավարժների և հոգեբանների զգայությունն ընտանիքում բռնության նկատմամբ, ինչպես նաև նրանց զինել համապատասխան գիտելիքներով ընտանիքում բռնության ենթարկված անձանց վաղ հայտնաբերման, արագ արձագանքման ու անհրաժեշտ օգնության կամ դրա ուղղորդման կազմակերպման համար:

Ձեռնարկը նաև անուղղակի նպատակ ունի ուսումնական հաստատությունների մանկավարժների կամ հոգեբանների միջոցով բարձրացնել ընտանիքում բռնության ենթարկված երեխաների և նրանց ընտանիքի անդամների իրազեկվածությունն ընտանիքում բռնության երևույթի և դրա դեմ պայքարի միջոցների վերաբերյալ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


5 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ

11 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ

14 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

20 ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

26 ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

27 ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ՈՒՄ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԻՆՉ Է ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանիքում բռնությունն ընտանիքի մի անդամի կողմից մյուս անդամի նկատմամբ իրականացվող բռնի արարքն է, որի նպատակն է անձին վնաս պատճառելը կամ նրան իշխելը կամ վերահսկելը: Ընդ որում, պարտադիր չէ, որ բռնությունը լինի ֆիզիկական: Ընտանիքում բռնությունը կարող է դրսևորվել սեռական, հոգեբանական, տնտեսական ինչպես նաև անտեսման ձևով:

## ՈՎՔԵՐ ԵՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

**Ընտանիքի անդամներ են՝** անկախ համատեղ բնակության հանգամանքից՝

- ամուսինը, այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը,
- նախկին ամուսինը,
- ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը,
- որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողը,
- երեխան, այդ թվում՝ որդեգրված երեխան, խորթ երեխան, հոգեզավակը:

**Ընտանիքի անդամներ են նաև** համատեղ բնակվող՝

- տատը, պապը, քույրը, եղբայրը, նաև՝ համամայր կամ համահայր,
- ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը,
- փեսան և հարսը՝ ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար:

**Ընտանիքում բռնությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ.**

Ֆիզիկական բռնություն՝ հրել, հարվածել, ապտակել, ծեծել, խեղդել, տարբեր վնասվածքներ պատճառել, սպանել, ազատությունից ապօրինի զրկել և այլն:

**Սեռական բռնություն՝** սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, մարդու կամքին հակառակ ցանկացած սեռական հարաբերություն, սեքսուալ բնույթի գործողություն կամ դրանց փորձը, կամ այն այնպիսի հանգամանքներում կատարելը, որոնցում տուժողը համաձայնություն չի տվել, 16 տարին չլրացած երեխաների հետ ցանկացած սեռական հարաբերությունը կամ սեքսուալ գործողությունը՝ անկախ նրանց համաձայնությունից և բռնություն կիրառելու հանգամանքից:

**Հոգեբանական բռնություն՝** ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, այնպիսի գործողություններ կատարելը, որոնք հիմնավոր վախ են առաջացնում անձի կամ նրա ընտանիքի անդամի մոտ կամ նրա առնչությամբ, արժանապատվության նվաստացումը, վերահսկողություն կամ հսկողության սահմանումը, արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը, շանտաժը, արատավորող տեղեկատվություն հրապարակելու սպառնալիքը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկատվությունն իրականությանը համապատասխանում է, թե՝ ոչ:

**Տնտեսական բռնություն՝** գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, աշխատանք գտնելու, զումար վաստակելու կամ կրթություն ստանալու արգելքը, անձնական գույքը տնօրինելու, տիրապետելու կամ օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը կամ դրանցից զրկելը:

**Անտեսում՝** երեխայի կամ անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, կրթություն, բժշկական օգնություն) դիտավորությամբ չբավարարելը, եթե դրանք ապահովելու հնարավորությունն առկա է:

# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ

Երեխաներն ընտանիքում բռնությունից կարող են տուժել թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի:

Երեխաները կարող են տուժել ընտանիքում բռնությունից նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք պարզապես ականատես են լինում ընտանիքում բռնությանը: Այն ազդում է երեխայի բնականոն զարգացման, առողջության և սոցիալիզացիայի վրա:

Երեխաների մոտ վարքային փոփոխությունները դրսևորվում են ֆիզիկական գանգատներով (մարմնի տարբեր հատվածներում ցավեր, արյունազեղումներ, վնասվածքներ և այլն) և տագնապային խանգարումներով (լեզվական խնդիրներ, կախյալ վիճակ, ինքնուրույնության բացակայություն և այլն):

Դպրոցական տարիքի երեխաները հիմնականում խնդիրներ են ունենում կապված հանձնարարություններ կատարելու կամ ուշադրության կենտրոնացման հետ, նրանք բացակայում են դասերից, ագրեսիվ պահվածք են ցուցաբերում մանկավարժների և իրենց դասընկերների նկատմամբ, ստում են՝ ինչը կարող է պայմանավորված լինել ինքնապաշտպանվելու ցանկությամբ: Նշվածները հաճախ հանդիող նշաններ են, սակայն գործնականում կարող են լինել նաև այլ դրսևորումներ:

Հետագայում բռնության զոհ դարձած երեխաների մոտ առաջացած բարդույթները և խնդիրները կարող են հանգեցնել հոգեսոմատիկ հիվանդությունների: Նրանք ավելի են հակված լինում ալկոհոլ ու թմրանյութեր օգտագործելուն, հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարելուն, քան բռնությունից զերծ միջավայրում մեծացած երեխաները, առհասարակ կարող են դրսևորել հակասոցիալական վարքագիծ:

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՄՈՏ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

**Ֆիզիկական բռնությունը** կարող է երեխայի մոտ ունենալ հետևյալ հետևանքները՝

- մարմնի վրա այրվածքներ, կտրվածքներ, կծելու հետքեր, արնազեղումներ, կապտուկներ կամ աչքի տակ՝ սևություն,
- երեխայի վախեցած հոգեվիճակ և տուն գնալու դիմադրություն,
- անսովոր ինքնամփոփություն կամ չափազանց ագրեսիվություն,
- կոնկրետ անձից վախ,
- ցածր ինքնավստահություն և ինքնագնահատական,
- սոցիալական հարաբերություններում բարդություններ, ինքնամփոփություն և այլն:

**Սեռական բռնությունը** կարող է երեխայի մոտ ունենալ հետևյալ հետևանքները՝

### Ֆիզիկական նշաններ՝

- քայլելու կամ նստելու դժվարություններ,
- սեռական օրգանների կամ հետանցքի շրջանի գրգռվածություն, արնահոսություն կամ այտուցվածություն,
- սեռական օրգանների շրջանում ցավ, քոր կամ այրոցի զգացում,
- արյունոտ, պատռված կամ հետքերով ներքնաշոր,
- միզասեռական վարակներ:

### Վարքային և հուզական նշաններ՝

- սեքսուալ գիտելիքների և սեռական վարքի անսովոր ցուցաբերում,
- հիգիենայի հետ կապված վարքային փոփոխություններ (հրաժարում լողանալուց կամ հաճախակի լոգանք),
- կպչուն վախեր,
- ֆոբիաներ,
- դեպրեսիայի և հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշներ,
- ինքնասպանության մտքերի արտահայտում (հատկապես՝ դեռահասների դեպքում),
- դպրոցական խնդիրներ՝ բացակայություններ, առաջադիմության անկում,
- մղձավանջներ,
- գիշերամիզություն,
- քույրերի և եղբայրների նկատմամբ չափազանց հոգատարություն և պաշտպանություն, խնամողի դերի ստանձնում,
- ռեգրեսիվ վարքի դրսևորում (բութ մատը ծծելը, եղունգները կրծելը),
- տնից կամ դպրոցից փախուստներ, ինքնավնասումներ,
- ֆիզիկական կոնտակտի դեպքում՝ երկյուղածություն[1]:

[1] Fergusson D.M., Lynskey M.T., Horwood L.J. Childhood sexual abuse and psychiatric disorder in young adulthood. I: Prevalence of sexual abuse and factors associated with sexual abuse. Journal of the American Academy of Child and Adolescent Psychiatry, 1996, N35, էջեր 1355–1364:

**Հոգեբանական բռնությունը** կարող է երեխայի մոտ ունենալ հետևյալ հետևանքները՝

- երևում են կաշկանդված և անվստահ,
- ունենում են սեփական հույզերը վերահսկելու դժվարություններ,
- ունենում են հարաբերություններ կառուցելու կամ պահպանելու բարդություններ,
- դրսևորում են տարիքին անհամապատասխան վարք,
- կարող են դրսևորել դեպրեսիայի կամ ագրեսիայի նշաններ,
- ունենում են հակասական և ծայրահեղական վարք,
- կարող են դրսևորել ինքնասպանության մտքեր կամ վարք (դեռահասների դեպքում):[2]

**Տնտեսական բռնությունը** կարող է երեխայի մոտ ունենալ հետևյալ հետևանքները՝

- դրսևորում են տարիքին անհամապատասխան վարք,
- կարող են դրսևորել դեպրեսիայի, ինչպես նաև ագրեսիայի նշաններ,
- ունենում են հակասական և ծայրահեղական վարք,
- երևում են կաշկանդված և անվստահ:

**Անտեսումը** կարող է երեխայի մոտ ունենալ հետևյալ հետևանքները՝

- ֆիզիկական զարգացման խնդիրներ՝ թերսնվածություն, ուղեղի զարգացման վնասվածություն, աճի դանդաղում,
- հոգեբանական զարգացման դժվարություններ՝ ցածր ակադեմիական առաջադիմություն, լեզվի զարգացման խանգարումներ,
- հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ինքնագնահատականի, կապվածությունների, վստահության պակաս,
- վարքային խնդիրներ՝ միջանձնային հարաբերությունների խնդիրներ, սոցիալական մեկուսացում, հակումների դժվար վերահսկողություն:[3]

**Հարկ է նշել, որ երեխաների արձագանքները տրավմատիկ իրողությանը մեծապես կախված են մի քանի կարևոր գործոններից՝**

- տրավմատիկ ազդեցության ուժգնությունից,
- երեխայի տարիքից և իրավիճակի հասկացման կարողությունից,
- սեռից ու անձնային առանձնահատկություններից,
- տրավմային նախորդող կենսագործունեության և զարգացման առանձնահատկություններից,
- տրավմատիկ ազդեցությունից հետո տեղի ունեցած նշանակալից փոփոխություններից (ապրելավայրի, դերերի, գործառույթների փոփոխություններ),
- աջակցության առանձնահատկություններից,
- հոգեբանական տրավմաների հետ առնչության նախկին փորձից և այլն:[4]

---

[2]Tracy N. Emotional Abuse: Definitions, Signs, Symptoms, Examples, HealthyPlace. https://www.healthyplace.com/abuse/ emotional-psychological-abuse/emotional-abuse-definitions-signs-symptoms-examples
[3]Acts of Omission: An Overview of Child Neglect, Bulletin for Professionals, July 2018. https://www.childwelfare.gov
[4]Ս. Մարաբյան, Դ.Թումասյան, Դ. Գևորգյան. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջ 46:

**Կրտսեր դպրոցահասակ երեխան և տրավման.** Տրավմատիկ իրողությանը երեխայի արձագանքը մեծապես կախված է նախկինում նրա տրավմատիկ փորձից, զարգացման և անձնային առանձնահատկություններից: Կրտսեր դպրոցականների համար տրավմատիկ կարող են լինել հետևյալ գործոնները՝

- ֆիզիկական կամ սեռական բռնությունը,
- մտերիմի կորուստը կամ մահը,
- մտերիմի հիվանդությունը,
- ընտանիքում բռնության տեսարանների ականատես լինելը,
- ավտովթարը կամ այլ վտանգավոր միջադեպերը,
- դպրոցական ճնշումները, հետապնդումը հասակակիցների կողմից,
- կյանքին սպառնացող իրավիճակները (բնական աղետներ, պատերազմ, ահաբեկչություն և այլն):[5]

**Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները սովորաբար ցուցաբերում են հետևյալ հակազդումները՝**

- տագնապ, անհանգստություն, վախ սեփական անձի, մտերիմի համար (հաճախ ուժեղ կապվածություն, կպչունություն դասվարին կամ խնամողին),
- վախ իրավիճակի կրկնման հանդեպ,
- տագնապային խանգարումներ,
- վարքային փոփոխություններ (ուշադրության ցրվածություն, գերակտիվություն կամ պասիվություն, ագրեսիվություն և այլն),
- անվստահություն ուրիշների հանդեպ,
- սոցիալական իրադարձություններին համապատասխան հակազդման դժվարություն, հարմարման դժվարություններ,
- փոփոխություններ դպրոցական վարքում,
- մարմնական ախտանիշներ (գլխացավեր, փորացավեր, գերզգայունություն և այլն), տրամադրության տատանումներ,
- չափազանց սուր կամ թույլ արձագանք տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն),
- տրավմատիկ իրողության վերապրում (դրվագների անընդհատ խաղարկում, կրկնում, վերապատմում),
- հակասոցիալական վարք, հեղինակությունների և կարգուկանոնի մերժում,
- մահվան վերաբերյալ հարցեր,
- մերժողական, խուսափողական վարք (հյուր չգնալ, չծանոթանալ նոր մարդկանց հետ և այլն),
- գերգրգռվածության նշաններ,
- հուզական կաղապարվածություն:

[5] Նույն տեղում, էջ 48:

**Տրավման միջին և ավագ դպրոցի երեխաների մոտ.** Որքան տարիքով մեծ է երեխան, այնքան ավելի է հասկանում իր հետ կատարվող իրադարձությունները, պատկերացումներ է ունենում մահվան, կորստի, կյանքի լուրջ փոփոխությունների վերաբերյալ: Այս տարիքում ևս երեխան կարող է տրավմատիկ ապրումներ ունենալ դպրոցական, ընտանիքում բռնություններից, բնական և մարդածին աղետներից և այլն: Հիմնականում, միջին դպրոցի սաները տրավմատիկ իրողությունից հետո դրսևորում են հետևյալ ախտանիշները՝

- անհանգստություն, վախ, տագնապ սեփական անձի կամ մտերիմների համար,
- վախ, որ տրավմատիկ իրողությունը կամ դրա հետևանքները կրկին կվերադառնան,
- վարքային փոփոխություններ (ուշադրության ցրվածություն, մեկուսացվածություն, ագրեսիվություն, կենտրոնացման և սովորելու դժվարություններ, լարվածություն ընկերների, ուսուցիչների հետ շփվելիս և այլն),
- մարմնական տարաբնույթ դրսևորումներ (գլխացավեր, փորացավեր, սրտխառնոց և այլն),
- անհանգստացնող հույզեր և զգացմունքներ, հուզական խառնաշփոթ (օրինակ՝ տագնապեցնող մտքեր կամ վրեժխնդրության ձգտում),
- տրավմատիկ իրողության մասին պատմության պարբերական վերարտադրում կամ մանրամասների վերհիշում, դրանց վրա կենտրոնացում,
- չափազանց սուր կամ թույլ արձագանք տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն),
- մերժողական, խուսափողական վարք (հյուր չգնալ, չծանոթանալ նոր մարդկանց հետ և այլն),
- գերզրգռվածության նշաններ,
- հուզական կաղապարվածություն,
- ինքնաոչնչացման մտքեր, գործողություններ,
- չափազանց հետաքրքրվածություն մահվան թեմայով,
- անվստահություն դիմացինի հանդեպ, շփման խնդիրներ:[6]

[6]Մանրամասն տես՝ Խանամիրյան Ի.Ռ., Գևորգյան Դ.Է. Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար. Եր.: ԵՊՀ հրատ., 2017:

# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ

Գոյություն ունեն ընտանիքում բռնության կամ բռնության փորձի մասին վկայող ընդհանուր նշաններ և ցուցիչներ, որոնք ուշադրության առարկա պետք է դառնան ուսումնական հաստատության անձնակազմի կողմից: Դրանք են՝

- Անհանգիստ շարժումներ
- Տարբեր վախեր
- Կենտրոնանալու դժվարություններ դասի ընթացքում
- Տնային առաջադրանքների պարբերաբար չկատարում կամ կատարելու դժվարություններ
- Առաջադիմության ցածր մակարդակ, հաճախակի ուշացումներ և բացակայություններ դասերից
- Դասի ընթացքում սխալվելու կամ հաջողություններ չգրանցելու վախ
- Դասերի ավարտից հետո ուշ մնալու սովորություններ
- Հաճախ լուռ մնալու և դասընկերներից մեկուսացում
- Ֆիզիկական ցավերի, օրինակ որովայնի կամ մեջքի հատվածում ցավերի մասին հաղորդում
- Ցածր ինքնագնահատական
- Հուզական դրսևորումներ (պարբերաբար լաց լինել, ամաչկոտություն և այլն)

Ուսումնական հաստատության անձնակազմը պետք է դիտարկի նշված գործոնները՝ երեխայի նկատմամբ բռնությունը հայտնաբերելու համար: Պետք է հաշվի առնել նաև, որ հնարավոր են այլ դրսևորումներ, որոնք կարող են ազդարարել ընտանիքում բռնության մասին:

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական հաստատություններում մանկավարժները և հոգեբանները պետք է առաջնահերթություն տան ընտանիքում բռնության ենթարկված երեխայի լավագույն շահին, իրավունքներին, պահանջմունքներին, կարիքներին ու ցանկություններին: Ընտանիքում բռնության ենթադրյալ ցանկացած դեպքի առնչությամբ ուսումնական հաստատության մանկավարժները տեղեկացնում են ուսումնական հաստատության հոգեբանին, ով հանդիսանում է ընտանիքում բռնության ենթարկված երեխայի հետ տարվող աշխատանքների համար պատասխանատու մասնագետը: Ուսումնական հաստատության մանկավարժներն աջակցում են հոգեբանին ընտանիքում բռնության ենթարկված երեխայի հետ աշխատանքներում:

Ուսումնական հաստատության մանկավարժները և հոգեբանները պետք է հարգեն ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետևյալ իրավունքները.

- Երեխայի կյանքի իրավունքը: Ընտանիքում բռնության ենթարկված երեխան պետք է զերծ մնա վախից և բռնությունից և ապրի անվտանգ միջավայրում, քանի որ կյանքի իրավունքը ոչ միայն երեխայի ֆիզիկական գոյությունն է, այլ նաև համապատասխան պայմանների ապահովումն է նրա բնականոն զարգացման համար:

- Առողջության պահպանման իրավունք:
- Ոչ խտրական վերաբերմունք: Երեխային պետք է վերաբերվել հավասարապես՝ անկախ նրա որևէ հատկանիշից՝ ներառյալ՝ առաջադիմությունը, ծագումը, ծնողների սոցիալական կամ գույքային դրությունը և այլն:
- Գաղտնիության պահպանման իրավունք: Ուսումնական հաստատության աշխատակցի վերաբերմունքը, տեղեկատվությունը և խորհրդատվությունը պետք է լինեն գաղտնի:
- Տեղեկացված լինելու իրավունք: Ընտանիքում բռնության ենթարկված երեխան պետք է իր համար հասկանալի լեզվով, համարժեք և ժամանակին տեղեկատվություն ստանա իր իրավունքների և հետագա գործողությունների վերաբերյալ և հասանելիություն ունենա տարբեր ծառայություններին:[7]

## ԻՆՉՊԻՍԻ՞ ՎԱՐՔԱԳԻԾ ՊԵՏՔ Է ՑՈՒՅԱԲԵՐԵԼ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ուսումնական հաստատության ցանկացած ներկայացուցիչ ընտանիքում բռնության կասկածի առկայության դեպքում, ինչպես նաև բռնության բացահատմանն աջակցելու նպատակով պետք է անհապաղ տեղեկացնի դրա մասին ուսումնական հաստատության հոգեբանին, ով երեխայի հետ անցկացնելու է հարցազրույց: Անհրաժեշտության դեպքում հարցազրույցին կարող է ներկա գտնվել նաև հաստատության բուժաշխատողը:

Երեխային չշփոթեցնելու և չվախեցնելու համար պետք է՝

- նախքան հարցազրույց անցկացնելը կամ այլ կերպ օգնելը, շատ կարևոր է ապահովել այնպիսի մթնոլորտ, որ երեխան պաշտպանված լինի կամ զգա իրեն պաշտպանված.
- հարցազրույցի ողջ ընթացքում ուշադրությամբ լսել երեխային, լինել հանգիստ և բարի,
- փոքրահասակ երեխայի հետ հարցազրույց անցկացնելու դեպքում երեխային առաջարկել խաղալիքներ կամ խաղեր, որոնք կարող են շեղել երեխայի ուշադրությունը դեպքից կամ սթրեսից կամ օգնել երեխաներին,
- արտահայտել մտահոգությունը նրանց համար և փոխանցել, որ լուրջ եք վերաբերվում նրանց ասածներին,
- աշխատել չխոժոռվել, չկատարել մարմնի այնպիսի շարժումներ, որոնք արտահայտում են բացասական վերաբերմունք,
- հիշել երեխայի հիմնական պահանջների բավարարման մասին, ընդմիջումներ անել, որպեսզի երեխան կարողանա հոգալ բնական կարիքները,
- օգտագործել երեխայի մասին հայտնի ցանկացած լրացուցիչ տեղեկությունն այնպես, որ բռնության մանրամասները բացահայտելիս երեխան իրեն զգա հարմարավետ և ապահով,

[7] Մանրամասն տե՛ս Դ. Թումասյան, Ք. Գրավեսոն. Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2016:

- շարունակաբար հոգատար վերաբերմունք ցուցաբերել երեխայի նկատմամբ, բայց աշխատել չդիպչել նրան,
- ներկայացնել ներկա գտնվողներին և բացատրել նրանց գործողությունները, օրինակ՝ հոգեբանի, բուժաշխատողի ինքնությունը, դերը և գործառույթները,
- հայտնել հարցազրույցի անցկացման պատճառների մասին՝ օգտագործելով երեխայի տարիքի համար հասկանալի բառեր և արտահայտություններ,
- ոչ մի դեպքում չդատապարտել կամ որևէ դժգոհություն չարտահայտել, երբ երեխան պատմում է իր նկատմամբ կատարված բռնության մասին,
- հարցազրույցի համար ոչինչ չառաջարկել երեխային՝ որպես հատուցում,
- չընդհատել երեխային, բացառությամբ՝ երեխայի ասածը ճշտելու նպատակով, աշխատել չտալ հուշող հարցեր: Թույլ տալ, որ երեխան պատմի իրողությունն այնպես, ինչպես հարկ է համարում,
- ասել նրանց, որ նրանք մենակ չեն, որ շատ երեխաներ ենթարկվում են ընտանիքում բռնության,
- միաժամանակ երեխային մեկից ավելի հարցեր չտալ, միայն նախորդ հարցի պատասխանը ստանալուց հետո անցնել հաջորդ հարցին,
- չտալ «ինչո՞ւ»-ով սկսվող հարցեր, քանի որ դրանք երեխայի մոտ առաջացնում են մեղքի զգացում՝ բռնության ենթարկվելու համար,
- երեխային տեղեկացրեք, որ դուք ամեն փուլում նրան կտեղեկացնեք այն մասին, թե ինչ եք անում դուք և ձեր հաստատությունը՝ խորհրդակցելով նրա հետ ամենաանվտանգ եղանակների մասին,
- թույլ տալ երեխային՝ տալ կարևոր թվացող ցանկացած հարց,
- երեխայի համար կրկնել նրա հայտնած տեղեկատվությունը, օգտագործել նրան հասկանալի բառեր և հնարավորություն տալ ավելացնելու արդեն ասվածին կամ տալու պարզաբանում,
- վստահել երեխային և վստահելի մթնոլորտ ձևավորել, որը պետք է պահպանվի մինչև հարցազրույցի ավարտը,
- եթե երեխան սկսում է ճնշվել, օգնեք նրան՝ իրեն վերագտնել: Օրինակ՝ մեկ այլ թեմայի մասին խոսեք, մինչև որ նա պատրաստ լինի շարունակել: Նրան առաջարկեք մի քանի անգամ դանդաղ, խորը շունչ քաշել: Ինքներդ դա արեք՝ նրան ցույց տալու համար:[8]

**Հատուկ պետք է հիշել, որ անհրաժեշտ է՝**

- Ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ, ինչպես նաև 14 տարին լրացած երեխաներին ուղղորդել համապատասխան ծառայություններ, որը կօգնի ընտանիքում բռնության ենթարկված անձին սեփական որոշում կայացնելու հարցում:
- Տեղեկանալ երեխայի կարիքների ու մտահոգությունների մասին:
- Եթե երեխան ցանկանում է լաց լինել, ժամանակ տվեք, որպեսզի հանգստանա:
- Անհրաժեշտության դեպքում պահպանեք լռություն:

[8] Օ'Բրայան Մ., Հոթեն Թ., Վան դեն Բորն Ա. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասին: Մասնագիտական խմբագիրներ՝ Դ. Թումասյան, Ա. Ղամբարյան: Երևան, 2012, էջեր 20-23:

# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Երեխայի հետ հարցազրույցը կարելի է անցկացնել խաղի ընթացքում, նկարչությամբ զբաղվելուն զուգահեռ, երեխայի առօրյայի որևէ այլ միջոցառման իրականացման ընթացքում, ինչպես նաև համակարգված ֆորմալ հարցազրույց կազմակերպելով:

Տարիքին զուգահեռ երեխաների մոտ ավելանում է բառապաշարը, մտապահելու ունակությունը, գնահատողական դատողություններ անելը, ինչն անդրադառնում է նաև նրանց կողմից բռնության որևէ դրսևորման մասին տեղեկատվության հայտնելու վրա:

Մինչև 10 տարեկան երեխաների հետ հարցազրույցը կարելի է վարել նկարչության, խաղերի միջոցով, և առհասարակ, մաքուր թղթերի, գունավոր մատիտների ու ներկերի առկայությունն անհամեմատ դյուրինացնում է երեխայի հետ շփումը, քանի որ սեղանին դրված այդ պարագաների միջոցով երեխան սկսում է արտահայտել իր մտքերն ու կարծիքները՝ նկարելուն զուգահեռ մեկնաբանելով նկարածը: Խաղի ժամանակ տիկնիկներին օժտելով ընտանիքում որոշակի դերեր՝ մայր, հայր, տատիկ և այլն, և նրանց նկատմամբ որոշակի վերաբերմունք ցուցաբերելով, երեխան կարող է պրոեկտել իր իրական վերաբերմունքն այդ անձանց նկատմամբ ու դրանով ներկայացնել հետաքրքրող տեղեկատվությունը:

Քանի որ ավելի մեծ տարիքի երեխաները և դեռահասները (10 տարեկանից բարձր) շատ նման են մեծահասակներին, հարցազրուցավարները կարող են չհասկանալ, որ նրանք կարող են էականորեն տարբերվել իրենց խոսքային և մտածական հնարավորություններով: Արդյունքում հարցազրուցավարները կարող են ունենալ բարդություններ կոնտակտի հաստատման, հարցազրույցի հրահանգների բացատրման և հարցերի հասկացման ապահովման առումով: Ցանկանալով երևալ կոմպետենտ՝ դեռահասները կարող են դժվարությամբ դիմել օգնության: Հարցազրուցավարները պետք է զգուշանան դեռահաս վկաներից/տուժողներից չհիմնավորված բարձր սպասելիքներից և չպետք է ցուցաբերեն ավելի քիչ աջակցող մոտեցում կամ խոսեն բարդ, խճճող լեզվով, ինչը կբարդացնի իրավիճակը:

Ստորև աղյուսակով ներկայացվում են երեխաների և դեռահասների իմացական և հուզական հիմնական տարիքային առանձնահատկությունները, սահմանափակումները և հարցազրույցի վարմանն ուղղված գործնական խորհուրդներ:

Երեխաների հետ հարցազրույցի ընթացքում ցանկալի է առաջնորդվել հետևյալ տեղեկատվությամբ՝[9]

[9] Ս. Մարաբյան, Դ. Թումասյան, Դ. Գևորգյան. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջեր 76-77:

# Վաղ մանկություն
# (2-6 տարեկան)

| Առանձնահատկություններ | Սահմանափակումներ | Խորհուրդ |
|---|---|---|
| **2-3 տարեկան՝**<br>• Երեխայի ֆանտազիաները, երևակայությունը դառնում են արտաքին աշխարհի օբյեկտներից անկախ, ավելի քիչ եսակենտրոն, ավելի ամբողջական<br>• Հասկանում են նկարների և լուսանկարների սիմվոլիկ նշանակությունը<br>• Տարբերակում են ներքին, հոգեկան և արտաքին իրադարձությունները<br>• Սկսում են հաշվել<br>• Սովորաբար արդեն ունենում են որոշակի բառապաշար, կազմում են կարճ նախադասություններ: | • Գնահատման ժամանակ կարևոր է վստահ լինել, որ երեխան հասկանում է բոլոր բառերի նշանակությունը. նրանց հետ շատ դժվար է իրականացնել լիարժեք հարցազրույց<br>• Հարցազրույցը հնարավոր է անցկացնել խաղի ձևով<br>• Ուշադրությունն ու կամային դրսևորումները սահմանափակ են, երեխաները կարող են արագ հոգնել և կարիք են ունենում գործողությունների փոփոխության | • Բառապաշարը պետք է լինի պարզ և երեխային հասկանալի, կարճ, ոչ երկիմաստ նախադասություններով<br>• Մեծամասամբ օգտագործել բաց հարցեր<br>• Տալ հստակ հարցեր, որոնք վերաբերում են դեպքի մանրամասներին, մարդուն, մարմնի մասերին<br>• Երեխան չի կողմնորոշվում ժամանակի մեջ, ուստի հարցադրումները պետք է կապված լինեն հստակ գործողությունների հետ: |
| **5-6 տարեկան՝**<br>• Նվազում է մոգական մտածողությունը<br>• Ավելանում են պլանավորման և ուշադրության կենտրոնացման հնարավորությունները<br>• Ճանաչելը, վերհիշելը, «սցենարային» հիշողությունը շարունակում են զարգանալ<br>• Զարգանում է հուզական հասկացումը (ուրիշների հուզական հակազդումները մեկնաբանելու, կանխատեսելու և դրանց վրա ազդելու հնարքներ)<br>• Մեծանում են ապրումակցելու հակազդումները<br>• Ցուցաբերում են տարաբնույթ բարոյական նորմեր և վարքաձևեր<br>• Հասկանում են սեռի անփոփոխ լինելը: | • Ժամանակային և տարածական կողմնորոշումը դեռ ձևավորված չեն, կարող են շփոթել ժամերը, օրերը, վայրերը: | • Հիշել, որ երեխայի համար անգամ երեկ տեղի ունեցածը կարող է համարվել վախուց կատարված և հավանական է երեխան օրերը շփոթի, սակայն պատմի թե ինչ է եղել, որտեղ, ներկայացնի որոշ մանրամասներ: |

# Միջին մանկություն
# (7-12 տարեկան)

| Առանձնահատկություններ | Սահմանափակումներ | Խորհուրդ |
|---|---|---|
| • Մտածողությունը ճկուն է, դուրս է գալիս «այստեղ և հիմա» սահմաններից, ավելի քիչ էգոցենտրիկ է<br>• Կարողանում է անել տրամաբանական եզրահանգումներ<br>• Երեխան դատում է այս կամ այն քայլի բարոյականության մասին՝ ելնելով դրանց հետևանքներից, այլ ոչ թե՝ դրդապատճառներից<br>• Իմացական գործընթացն ակտիվ է, ընտրողական, պատճառա-հետևանքային, համակարգված<br>• Հիշողությունն ավելի համակարգված է<br>• Առաջ են գալիս բարոյական պատկերացումներ, որոնք դեռ հիմնվում են արտաքին պատժի կամ խրախուսանքի վրա<br>• Մեծանում է սեփական անձի ընկալման կարևորությունը, ուստի տրավմատիզացիայի ժամանակ մեծանում է երեխայի սեփական դերի ընկալման կարևորությունը: | **7-10 տարեկան՝**<br>Կենտրոնացած են ենթարկվելու և պատժից խուսափելու/ պարգևատրվելու վրա, ինչը կարող է ազդել հարցերի պատասխանների ճշմարտացիության վրա:<br><br>**10-12 տարեկան՝**<br>Կողմնորոշված են դեպի լավ հարաբերությունների պահպանում և այլ մարդկանցից խրախուսանքի ստացում. պետք է ենթարկվել, որպեսզի խուսափեն այլ մարդկանց արհամարհանքից կամ պատժից: | • Տալ բաց, ընդհանուր հարցեր, որոնք թույլ կտան ազատ շարադրել իրողությունը<br>• Խուսափել եզրույթներից, որոնք կարող են վախեցնել երեխային<br>• Կարևոր է մոտիվացնել երեխային, հատկապես դա հնարավոր է անել խրախուսելով նրանց դրական դերն ու նշանակալիությունը հարցաքննության համար<br>• Չի կարելի սպառնալ կամ վախեցնել ուղղակի կամ անուղղակի, քանի որ երեխան կարող է սկսել ձգտել հեռանալ այդտեղից, այլ ոչ թե անկեղծ լինել: |

# Դեռահասություն/ վաղ պատանեկություն (13-18 տարեկան)

| Առանձնահատկություններ | Սահմանափակումներ | Խորհուրդ |
|---|---|---|
| **Սեռահասունացման շրջան**<br>• «Մեծահասակ» լինելու զգացողության զարգացում<br>• Ինքնագիտակցության զարգացում<br>• Ապահովության փնտրտուք հասակակիցների շրջանում<br>• Հասունության և անկախության ձգտում<br>• Դեռահասի կարևոր պահանջմունքներ՝<br>• ֆիզիոլոգիական պահանջմունքները, որոնք դրդում են դեռահասներին ֆիզիկական և սեռական ակտիվության<br>• ապահովության պահանջմունք, որը դեռահասը սկսում է փնտրել իր հասակակիցների շրջանում<br>• ընտանիքից անկախ լինելու պահանջմունքը (ինքնահաստատում, ինքնուրույնություն)<br>• կապվածության պահանջմունք<br>• հաջողության պահանջմունք՝ սեփական ուժերը փորձելու և հաջողության հասնելու պահանջմունք<br>• ինքնիրացման և սեփական «Ես»-ի զարգացման պահանջմունք: | **Հուզական անհավասարակշռություն**<br>• Ձգտում առանձնանալու, ինքնամփոփություն<br>• Կաշկանդվածություն, ամոթխածություն<br>• Խոցելի ինքնասիրություն<br>• Չափազանցված և մաքսիմալիստական մտածողություն<br>• Կոնֆլիկտայնություն, հակվածություն ներքին կոնֆլիկտների<br>• Ըմբոստություն ծնողական /հասարակական/ համակարգային նորմերի դեմ: | • Անհրաժեշտ է ընտրել հաղորդակցման ոչ ակնհայտ հիերարխիկ ոճ՝ ավագ ընկերոջ կամ հավասարի<br>• Խոսքը պետք է լինի հասկանալի, հասարակ, բայց՝ ոչ ժարգոնային<br>• Կարևոր է խոսել դեռահասի նախասիրությունների շրջանակից, կիսվել սեփական հետաքրքրություններով<br>• Չմոռանալ, որ չնայած դիմացինն արդեն երեխա չէ, բայց հուզական մակարդակում նա վերջնականապես հասունացած չէ, և նրա մոտ կարող են գերակայել լավ թաքցվող մանկական հետաքրքրություններ<br>• Անհրաժեշտ է խուսափել գերակայող, ուժի դիրքից զրույցը վարելուց, քանի որ նման ոճը հավանական է, որ կարթնացնի ընդդիմանալու պահանջ<br>• Հոգեբանական հարմարավետություն ստեղծելու համար արդյունավետ է թույլ տալ, որպեսզի զրույցի տեմպը թելադրի դեռահասը և չզգա ճնշում կամ պարտադրանք<br>• Տեղին հումորը կարող է նպաստել «սառույցի կոտրմանը»: |

- շարունակաբար հոգատար վերաբերմունք ցուցաբերել երեխայի նկատմամբ, բայց աշխատել չդիպչել նրան,
- ներկայացնել ներկա գտնվողներին և բացատրել նրանց գործողությունները, օրինակ՝ հոգեբանի, բուժաշխատողի ինքնությունը, դերը և գործառույթները,
- հայտնել հարցազրույցի անցկացման պատճառների մասին՝ օգտագործելով երեխայի տարիքի համար հասկանալի բառեր և արտահայտություններ,
- ոչ մի դեպքում չդատապարտել կամ որևէ դժգոհություն չարտահայտել, երբ երեխան պատմում է իր նկատմամբ կատարված բռնության մասին,
- հարցազրույցի համար ոչինչ չառաջարկել երեխային՝ որպես հատուցում,
- չընդհատել երեխային, բացառությամբ՝ երեխայի ասածը ճշտելու նպատակով, աշխատել չտալ հուշող հարցեր: Թույլ տալ, որ երեխան պատմի իրողությունն այնպես, ինչպես հարկ է համարում,
- ասել նրանց, որ նրանք մենակ չեն, որ շատ երեխաներ ենթարկվում են ընտանիքում բռնության,
- միաժամանակ երեխային մեկից ավելի հարցեր չտալ, միայն նախորդ հարցի պատասխանը ստանալուց հետո անցնել հաջորդ հարցին,
- չտալ «ինչո՞ւ»-ով սկսվող հարցեր, քանի որ դրանք երեխայի մոտ առաջացնում են մեղքի զգացում՝ բռնության ենթարկվելու համար,
- երեխային տեղեկացրեք, որ դուք ամեն փուլում նրան կտեղեկացնեք այն մասին, թե ինչ եք անում դուք և ձեր հաստատությունը՝ խորհրդակցելով նրա հետ ամենաանվտանգ եղանակների մասին,
- թույլ տալ երեխային՝ տալ կարևոր թվացող ցանկացած հարց,
- երեխայի համար կրկնել նրա հայտնած տեղեկատվությունը, օգտագործել նրան հասկանալի բառեր և հնարավորություն տալ ավելացնելու արդեն ասվածին կամ տալու պարզաբանում,
- վստահել երեխային և վստահելի մթնոլորտ ձևավորել, որը պետք է պահպանվի մինչև հարցազրույցի ավարտը,
- եթե երեխան սկսում է ճնշվել, օգնեք նրան՝ իրեն վերագտնել: Օրինակ՝ մեկ այլ թեմայի մասին խոսեք, մինչև որ նա պատրաստ լինի շարունակել: Նրան առաջարկեք մի քանի անգամ դանդաղ, խորը շունչ քաշել: Ինքներդ դա արեք՝ նրան ցույց տալու համար:[8]

**Հատուկ պետք է հիշել, որ անհրաժեշտ է՝**

- Ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ, ինչպես նաև 14 տարին լրացած երեխաներին ուղղորդել համապատասխան ծառայություններ, որը կօգնի ընտանիքում բռնության ենթարկված անձին սեփական որոշում կայացնելու հարցում:
- Տեղեկանալ երեխայի կարիքների ու մտահոգությունների մասին:
- Եթե երեխան ցանկանում է լաց լինել, ժամանակ տվեք, որպեսզի հանգստանա:
- Անհրաժեշտության դեպքում պահպանեք լռություն:

[8] Օ'Բրայան Մ., Հոթեն Թ., Վան դեն Բորն Ա. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասին: Մասնագիտական խմբագիրներ՝ Դ. Թումասյան, Ա. Ղամբարյան: Երևան, 2012, էջեր 20-23:

**Երեխաների հետ հարցազրույց վարելիս պետք է**
**ԽՈՒՍԱՓԵԼ որոշ ձևակերպումներից:**

| ԽՈՒՍԱՓԵԼ | ԳՈՐԾԱԾԵԼ |
|---|---|
| երկար նախադասություններից, | համառոտ նախադասություններ, |
| բարդ նախադասություններից, | պարզ նախադասություններ, |
| կրավորական սեռից (Ի՞նչ է արվել քո կողմից), | ներգործական սեռ (Ի՞նչ ես արել), |
| ժխտական նախադասություններից (Դու նրան չե՞ս ասել), | ոչ ժխտական նախադասություններ (Դու նրան ասացի՞ր), |
| բազմիմաստ հարցերից, | միայն մեկ իմաստ ունեցող հարցեր, |
| մեկ ժխտումից (Մայրիկդ չի՞ ասել քեզ, որ փողոց դուրս չգաս), | մեկ ժխտում (Մայրիկդ ասե՞լ է քեզ, որ փողոց դուրս չգաս), |
| հռետորական հարցերից (Եթե հոգնես, ասա): | ուղիղ հարցեր (Դու հոգնե՞լ ես):[13] |

[13] Օ՛Բրայան Մ., Հոթեն Թ., Վան դեն Բորն Ա. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի /շահագործման ենթարկված անչափահասներին /մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար/: Երևան, 2012, էջ 16-17:

# ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մինչ ուղղորդումն ուսումնական հաստատությունների հոգեբանները և մանկավարժները պետք է հստակ պատկերացնեն ընտանիքում բռնության դեմ պայքարում ներգրավված մարմինների դերակատարումն ու գործառույթները: Դրա իմացությունը հնարավորություն կընձեռի ուղղորդումը դարձնել թիրախային ու ոչ տրավմատիկ: Այդ իսկ պատճառով, ուսումնական հաստատությունների մանկավարժների և հոգեբանների իմացությունն այդ հարցերի վերաբերյալ նրանց հնարավորություն կընձեռի կողմնորոշվելու և ճիշտ խորհուրդներ տալու: Այսպես՝

## 1. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց, ներառյալ՝ երեխաներին, անհրաժեշտ է իրազեկել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով ամրագրված պաշտպանության միջոցների՝ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշման կայացման հնարավորության մասին: Իրազեկումը պետք է իրականացվի երեխայի տարիքին և զարգացման մակարդակին համապատասխան:

### ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:

### ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.

2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պահին ընտանիքում բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության ծառայողին.

5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

Ոստիկանությունը կարող է իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ինչպես ընտանիքում բռնության ենթարկված անձի հայտնաբերման, այնպես էլ դեպքի մանրամասները պարզելու համար:

# 2. ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել անհետաձգելի միջամտության որոշմամբ նախատեսված սահմանափակումները:

Բացի դրանից, դատարանը կարող է՝

1) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով.

2) արգելել երեխաների հետ տեսակցությունները.

3) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր:

# 3. ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղղորդման ընթացքում կարևոր է անձին ուղղորդել այնպիսի հաստատություն, որը համապատասխանում է նրա կարիքներին և պահանջներին:

Օրինակ՝ եթե տուժողն ունի ապաստարանի կամ իրավաբանական օգնության կարիք, անհրաժեշտ է նրան ուղղորդել կազմակերպություն, որը տրամադրում է նման ծառայություններ:

Ուղղորդելիս անհրաժեշտ է տուժողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կազմակերպության և նրանց ծառայությունների մասին:

## ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ՝

- ապահով բնակելի տարածք՝ առավելագույնը 12 ամիս ժամկետով,
- սնունդ և հագուստ,
- երեխաների համար դասապատրաստմանն անհրաժեշտ կահավորմամբ և պիտույքներով տարածություն,
- իրավաբանական և հոգեբանական օգնություն,
- սոցիալական աջակցություն,
- առողջապահական հաստատություններ դիմելու գործընթացի կազմակերպում,
- աշխատանքի տեղավորման և սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցություն:

Նշված բոլոր ծառայությունները տրամադրվում են անհատույց:

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ՈՉ ԱՎԵԼ ՔԱՆ 150.000 ՀՀ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ՝

1) կենսաապահովման նվազագույն կարիքները հոգալու համար,
2) բուժումը կամ առողջության վերականգնումը կազմակերպելու նպատակով փոխհատուցման կամ մասնակի փոխհատուցման համար,
3) ժամանակավոր կացարանով ապահովելու նպատակով բնակելի տարածքի վարձակալության գումարի փոխհատուցման համար,
4) աշխատանքի տեղավորման նպատակով վերապատրաստման դասընթացների վարձավճարի փոխհատուցման համար՝ բացառությամբ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործազուրկների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար սահմանված զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում նախատեսված դասընթացների:

# 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ, ԵՐԲ ԽԱԽՏՎԵԼ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից,
- պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպության ու դրա պաշտոնատար անձի կողմից,
- հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ՝

- անձն անձամբ,
- ծնողը, զավակը կամ այլ մերձավոր ազգականը, ներկայացուցիչը, այդ թվում՝ փաստաբանը,
- հասարակական կազմակերպությունը՝ անձի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Մարդու իրավունքների պաշտպանին դիմելը չի կասեցնում դատարան դիմելու համար սահմանված ժամկետները: Միաժամանակ, պետական մարմիններին, բացառությամբ դատարանների, դիմելը չի խոչընդոտում Պաշտպանին հասցեագրված դիմումի քննությանը:

# 5. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԿԱՄ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ կամ ՀՀ դատախազություն կարելի է դիմել ընտանիքում բռնության հանցավոր ցանկացած դրսևորման դեպքում: Մասնավորապես, քրեական հետապնդում նախաձեռնելու համար հաճախ պետք է ընդամենն ընտանիքում բռնության դեպքի մասին բարձրաձայնելը և դիմում ներկայացնելը, ընդ որում՝ դիմումի ֆորմալ ձև չկա, այն կարող է շարադրվել ազատ ոճով, ինչպես նաև կարևորվում է այն փաստը, որ եթե հանցագործությունը կատարվել է մինչև 14 տարեկան երեխայի նկատմամբ, ապա որևէ բողոք պարտադիր չէ և ավելին, հետագայում հնարավոր չէ նաև այդ անձանց և հանցագործի հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը:

## ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ուսումնական հաստատությունների մանկավարժները և հոգեբաններն ընտանիքում բռնության դեպքի կասկածի դեպքում պետք է դրա մասին հայտնեն իրենց անմիջական ղեկավարին ուսումնական հաստատության տնօրենին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվությունը փոխանցելու նպատակով:

Եթե ակնհայտ է ընտանիքում բռնության դրսևորման դեպքը, ապա դրա հասցեատերը հանդիսանում է ՀՀ քննչական կոմիտեն կամ ՀՀ դատախազությունը, սակայն հնարավոր է այդ տեղեկատվությունը փոխանցել նաև ՀՀ ոստիկանությանը, որտեղ անհրաժեշտ գործողություններից հետո տեղեկատվությունը նորից կփոխանցվի ՀՀ քննչական կոմիտե:

Եթե ընտանիքում բռնության դրսևորման դեպքով ակնհայտ չէ, որ այն հանցագործություն է, ապա տեղեկատվությունը փոխանցվում է ՀՀ ոստիկանություն:

Եթե երեխայի վրա կան մարմնական վնասվածքներ կամ ընտանիքում բռնության հետևանքով տրավմաների կասկած կա, ապա ահազանգ է իրականացվում է բժշկական հաստատություններ, որոնք երեխային զննելուց և առաջին բժշկական օգնություն ցույց տալուց բացի, օրենքով սահմանահված կարգով անհրաժեշտ տեղեկատվությունը կփոխանցեն ՀՀ ոստիկանություն:

Եթե երեխայի մոտ հայտնաբերվել է տնտեսական բռնության կամ անտեսման հատկանիշներ, և կա կասկած, որ դա պայմանավորված է երեխայի ընտանիքի սոցիալապես անապահով լինելու հանգամանքով, ապա այդ տեղեկատվությունը փոխանցվում է միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն կամ համայնքի կամ Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմին:

Եթե ուսումնական հաստատությունների մանկավարժները և հոգեբանները դժվարանում են կողմնորոշվել ստեղծված իրավիճակում, ապա կարող են խորհրդատվություն ստանալ վերադաս մարմիններից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան և այլն, կամ դիմել Մարդու իրավունքների պաշտպանին կամ մասնագիտացված հասարակական կազմակերպություններ, եթե այդպիսիք սպասարկում են ուսումնական հաստատության գտնվելու վայրի տարածքը կամ ունեն ներկայացուցչություն այդ տարածքում:

Ուսումնական հաստատությունների մանկավարժները և հոգեբաններն ընտանիքում բռնության դեպքի կասկածի առկայության դեպքում ինքնուրույն դատարան դիմելու իրավունք չունեն:

# ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Հաշվի առնելով, որ ընտանիքում բռնության դրսևորումները բազմազան են և այն կարող է կիրառվել ու փաստացի կիրառվում է ոչ միայն երեխայի, այլ նաև ընտանիքի այլ անդամների նկատմամբ, հետևաբար ուսումնական հաստատությունների մանկավարժները և հոգեբաններն ակամա կարող են առնչվել ընտանիքում բռնության տարատեսակ այլ դեպքերի հետ, և եթե նրանք նկատում են երեխային դպրոց բերող մոր, ավագ քրոջ կամ եղբոր կամ այլ անձի մոտ վնասվածքներ, ընկճվածություն կամ կասկածի այլ դրսևորումներ, ապա այդ դեպքերում նույնպես կիրառելի են սույն ձեռնարկում նախատեսված մեխանիզմները: Իհարկե, նախևառաջ պետք է ձևավորել վստահելի հարաբերություններ այդ անձի հետ և փոձել զրուցել նրա հետ և միայն որոշակի նախապատրաստական և բացատրական աշխատանք իրականացնելուց հետո, իրականացնել հաջորդիվ քայլերը:

Եթե ուսումնական հաստատությունների մանկավարժների կամ հոգեբանների համար ակնհայտ է ընտանիքում բռնության դրսևորման դեպքը երեխայի մերձավոր ազգականի նկատմամբ, ապա դրա հասցեատերը հանդիսանում է ՀՀ քննչական կոմիտեն կամ ՀՀ դատախազությունը, որոնք իրենց գործառույթներն իրականացնում են ընտանիքում բռնության ցանկացած դեպքի դրսևորման դեպքում՝ բացառելով խտրականությունը: Նմանատիպ աշխատառճ առկա է նաև ՀՀ ոստիկանությունում և եթե առկա են ընտանիքում բռնության անգամ քրեորեն ոչ պատժելի դրսևորումներ, ուսումնական հաստատությունների մանկավարժները և հոգեբաններն անհրաժեշտ տեղեկատվությունը կարող են փոխանցել ՀՀ ոստիկանությանը, որն ըստ անհրաժեշտության այն կարող է փոխանցել ՀՀ քննչական կոմիտեին կամ ՀՀ դատախազությանը: Սակայն, բոլոր դեպքերում, ՀՀ ոստիկանությունը պարտավոր է նախաձեռնել կանխարգելիչ միջոցառումներ ոչ միայն երեխային, այլ նաև նրա ընտանիքի անդամներին ընտանիքում բռնությունից պաշտպանելու համար:

# ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ՈՐՈՆՑ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| ՀՀ ոստիկանություն | (www.police.am) | ԹԵԺ ԳԻԾ՝ 1-02 կամ 1-77 |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | (www.mlsa.am) | ԹԵԺ ԳԻԾ՝ 114 |
| ՀՀ կրթության, գիտության, մշակութի և սպորտի նախարարություն | (https://escs.am/am) | ԹԵԺ ԳԻԾ՝ Հեռ. 010-59-96-00 |
| ՀՀ առողջապահության նախարարություն | (www.moh.am) | ԹԵԺ ԳԻԾ՝ 8003 |
| ՀՀ դատախազություն | (www.moh.am) | Հեռ. 010-51-16-50 |
| ՀՀ քննչական կոմիտե | (www.moh.am) | Հեռ. 010-88-01-44 |
| Մարդու իրավունքների պաշտպան | (www.ombuds.am) | ԹԵԺ ԳԻԾ՝ 116 |
| ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ | (www.advocates.am) | Հեռ. 010-600 701 |
| Խնամակալության և հոգաբարձության մարմիններ | https://www.spyur.am/am/yellow_pages/yp/1483 | |
| Ընտանիքում բռնության ենթարկված-ներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցներ, որոնցից են՝աջակցության կենտրոնները և ապաստարանները | https://www.mlsa.am/blockpage/2/8/head | |

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՋԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ

| Մարզ | Անվանում | Տնօրեն | Թեժ Գիծ |
|---|---|---|---|
| | «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ | Մարո Մաթոսյան | 099 887-808 |
| Շիրակ Գյումրի | «Կանանց իրավունքների տուն» ՀԿ | Կարինե Դավթյան | 077 570-870 |
| Կոտայք Հրազդան | «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ | Նարե Հայրապետյան | 077 380-053 |
| Վայոց Ձոր Եղեգնաձոր | «Դու մենակ չես» ՀԿ | Նաիրա Հարությունյան | 098 886-077 |
| Արարատ Արտաշատ | «Դու մենակ չես» ՀԿ | Նաիրա Հարությունյան | 098 886-077 |
| Արմավիր Արմավիր | «Երիտասարդ Ավանգարդ» ՀԿ | Սուսաննա Մատինյան | 093 574-657 |
| Արագածոտն Թալին | «Թալին հույս» ՀԿ | Անահիտ Աբգարյան | 091 482-035 |
| Լոռի Վանաձոր | «Ընտանիք առանց բռնության» ՀԿ | Հայարփի Այդինյան | 098 092-094 |
| Տավուշ Իջևան | «Երիտասարդ Տավուշ» իրավապաշտպան ՀԿ | Մանուշ Մարալչյան | 094 788-770 |
| Գեղարքունիք Մարտունի | «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ | Անահիտ Գևորգյան | 094 876-502 |
| Գեղարքունիք Գավառ | «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ | Անահիտ Գևորգյան | 094 876-505 |
| Սյունիք Գորիս | «Սոսե» ՀԿ | Լիանա Սահակյան | 098 848-453 |

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Օրենքներ, միջազգային և իրավական այլ ակտեր


1. «Երեխայի իրավունքների մասին» 1989թ.-ի ՄԱԿ-ի կոնվենցիա
2. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին 2005թ.-ի կամընտիր արձանագրություն
3. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ զինված հակամարտություններին վերաբերող 2005թ.-ի կամընտիր արձանագրություն
4. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006թ.-ի ՄԱԿ-ի կոնվենցիա
5. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ.-ի ԵԽ-ի կոնվենցիա
6. Մարդու իրավունքների 1948թ.-ի համընդհանուր հռչակագիր
7. Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիա
8. Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության 2005թ.-ի ուղենիշներ
9. ՀՀ Սահմանադրության 2015թ.-ի խմբագրությամբ
10. ՀՀ 2021թ.-ի քրեական օրենսգիրք
11. «Երեխաների իրավունքների մասին» 1996թ.-ի մայիսի 29-ի ՀՀ օրենք
12. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017թ.-ի դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենք


## Մասնագիտական գրականություն, դասագրքեր, հոդվածներ


13. Բեջանյան Ա. Հոգեբանական խորհրդատվության հիմունքներ: Երևան, Ապագա ՍՊԸ, 2022:
14. Բեջանյան Ա.Տ. Հոգեբանական խորհրդատվության հիմունքներ. Ձեռնարկ. Երևան, Ապագա, 2016:
15. Բրաուն Կ. Դ. Երեխաների պաշտպանություն, Երևան, ՅՈՒՆԻՍԵՖ, 2002:
16. Դիլբանդյան Ս., Աղաբաբյան Ն. Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման որոշ հարցեր: http://ysu.am/files/04S_Dilbandyan_N_Aghababyan.pdf (12.02.2017):
17. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կիրառման ձեռնարկ/ Ռ. Հոջկին, Փ. Նյուվել: Երևան, 2002:
18. Երեխաների հանդեպ բռնությունների կանխարգելման միջսեկտորալ հանձնախմբերի աշխատանքային նյութեր, Երևան, ՅՈՒՆԻՍԵՖ, 2003:
19. Երեխաների դեմ ուղղված բռնության վերացում, Ձեռնարկ խորհրդականների համար, Երևան, ՅՈՒՆԻՍԵՖ, 2007:
20. Երեխաների նկատմամբ կիրառվող բռնություններ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, ՅՈՒՆԻՍԵՖ, 2003:
21. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում /մինչդատական վարույթ/. Երևան, 2014:
22. Ղամբարյան Ա, Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները: Եր.: «Սկետչ-Սթայլ» ՍՊԸ, 2015:

23. Ղամբարյան Ա. Անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթը. Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների պատրաստման մոդուլներ. Մոդուլ 2 – Իրավագիտության մաս, Երևան, 2017:
24. Թումասյան Դ., Գրավեսոն Ք. Օրենքի հետ առանչություն ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները: Եր., Հեղ. Հրատ., 2016:
25. Թումասյան Դ. Երեխաների իրավունքների քրեաիրավական և վարչաիրավական պաշտպանությունը. Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների պատրաստման մոդուլներ. Մոդուլ 2 – Իրավագիտության մաս, Երևան, 2017:
26. Թումասյան Դ., Ուեյն Ջ. Խոցելի տուժողների/ վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը. Երևան, 2017:
27. Թումասյան Դ. Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում. Երևան, 2020:
28. Թումասյան Դ. Անչափահաս տուժողների և վկաների հարցաքննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում// Արդարադատության ակադեմիայի բանբեր, 2020, N°2 (4):
29. Խանամիրյան Ի.Ռ., Գևորգյան Դ.Է. Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար. Եր.: ԵՊՀ հրատ., 2017:
30. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Հատուկ մաս). Ուսումնական ձեռնարկ /ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Դ.Ա. Թումասյան, Կ.Հ. Հովհաննիսյան. - Եր.: Լիմուշ հրատարակչություն, 2022:
31. Օ.Բրայան, Թ.Հոթեն, Ա.Վան դեն Բորն. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին /մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար/: Երևան, 2012:
32. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի դեռահասների հոգեկան առողջության չափումը բնակչության մակարդակում (MMAP, May 2020):
33. Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունը, Երևան, 2019:
34. Введение допроса ребенка, ставшего жертвой сексуального насилия. Международный опыт в области проведения допроса потерпевших детей в рамках судебной процедуры, /Сборник эффективных методик. М., 2013.
35. Велирзаева М.С. Тактические приемы допроса лиц с психическими расстройствами // Современная юриспруденция: актуальные вопросы, достижения и инновации: сборник статей IV Международной научно-практической конференции. В 2-х частях. Ч. 2. Пенза: Наука и Просвещение, 2017. Էջեր 33-35:
36. Винникот Д. В. Маленькие дети и их матери. М., 1998.
37. Гозман Л. Я. Психология эмоциональных отношений. М., 1987.
38. Дружинин В.Н. Психология семьи. М., 1996.
39. Евтиков О. Практика психологического тренинга. Феникс, 2004.
40. Карвасарский Б.Д. Психотерапия. СПБ., Питер, 2002.
41. Кетлер Дж., Браун Р. Психотерапевтическое консультирование. СПб., 2001.
42. Колесникова Г.И. Психологическое консультирование. М.: Феникс, 2004.
43. Кочюнас. Р. Основы психологического консультирования М.: Академический проект. 1999.
44. Крайг Г. Психология развития. СПБ., 2000.
45. Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. - СПб: Санкт-Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014:

46. Немов Р.С. Основы психологического консультирования. М. 1999.
47. Помощь ребенку - жертве сексуального насилия. Международное Католическое бюро ребенка, Париж-Женева, 2017.
48. Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред.-сост. Ю.Ю. Берестнев, М.В. Виноградов. Перевод с англ. В.А. Власихина. М., 2004:
49. Силяева Е.Г. Психология семейных отношений с основамы семейной консультирования. Москва, 2004.
50. Сухов И.В. Правовое положение педагога и психолога по уголовным делам с участием несовершеннолетних // Закон и право. 2007. № 12.
51. Тепляшин П.В., Федорова Е.А. Криминологические детерминанты, тенденции и прогноз преступности в Сибирском федеральном округе // Алтайский юридический вестник. 2019. № 1 (25). Էջեր 89-96:
52. Толстолужинская Е.М. Особенности расследования преступлений, совершённых лицами с психическими аномалиями: дис… канд. юр. наук. Тюмень: ТЮИ МВД России, 2004.
53. Фрейд А. Психология Я и защитные механизмы. Педагогика-Пресс. 1993.
54. Хьелл Л., Зиглер Д. Теории личности (Основные положения, исследования и применение). СПб., 1997.
55. Шнейдер Л. Б. Психология семейных отношений: курс лекции. Эксмо-Пресс, 2000.
56. Шостром Э., Браммер Л. Терапевтическая психология. Основы консультирования и психотерапии. М.: Эскимо. 2007.
57. Эриксон Э. Детство и овщество. М., 1992.
58. Benjamin A. The Helping Interview. Boston: Houghton Mifflin, 1987,
59. Behind closed doors. The impact of Domestic violence on Children_2009, https://www.ojp.gov/ncjrs/virtual-library/abstracts/behind-closed-doors-impact-domestic-violence-children
60. Burks H. M., Steffire B. Theories of Counseling, 3rd Ed. N. Y.: McGraw-Hill, 1979.
61. Children's Needs-Parenting Capacity", second edition, Hedy Cleaver and Jane Aldgate, London: TSO-2011.
62. Holroyd J. C., Brodsky A. Psychologists' attitudes and practices regarding erotic and non-erotic physical contact with patients // American Psychologist, 1977. Vol. 32.
63. Ively A. Microcounseling: Innovations in Interviewing Training. Springfield, Ill.: Chas C. Thomas, 1971.
64. Multidisciplinary training "Child abuse and family violence" manual ISPCAN, Estonia, 2005.
65. Parenting and outcomes for children, Thomas G. O' Connor and Stephen B.C. Scott, Kings College London 2007.
66. Patti Toth, JD "Comparing the NICHD and RATAC Child Forensic Interview Approaches—Do the Differences Matter?"-2011.
67. Parents Who Abuse Their Children, Gwyneth Bell, M.B., Ch.B.1. Canadian Psychiatric Association Journal Vol. 18, No. 3
68. PsyJournals.ru — http://psyjournals.ru/mpj/2010/n4/33628.shtml [Интент-анализ психотерапевтической речи К. Роджерса. Случаи Герберта, Глории и Джен. - Консультативная психология и психотерапия - 2010/4.

## Գրառումների համար

ԵՐԵՎԱՆ – 2023